

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՅԵՐԻ ԼՐԱՅՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԲԱՅԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՍԱՆ ՍԵԹՈՂՆԵՐԸ

Հողվածի շրջանակներում քննարկվել և վերլուծության են ենթարկվել իրավակիրառ գործունեության ընթացքում իրավունքի բացերի լրացման իրավաբանական եղանակների հիմնախնդիրները: Նշված հիմնախնդրի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ իրավական նորմերի հակասությունները, թերությունները կամ թերի լինելը կարելի է հայտաբերել միայն իրավակիրառ գործունեության ընթացքում և դրանց լրացման համար կարևոր նշանակություն ունի իրավաստեղծ գործունեությունը, ինչպես նաև դատարանում այս կամ այն իրավական վեճի լուծման կամ անհրաժեշտության դեպքում կարգավորելու կոնկրետ իրավական հարցը այլ իրավասու մարմինների կողմից: Հետևաբար դատարանն է լինելու վերջին ատյանը, որը իրավասու է հաստատելու բացերի առկայությունը: Նման իրավիճակի առաջացման դեպքում դատարանին անհրաժեշտ է գործն ըստ էության լուծել, այսինքն՝ լրացնել բացը: Ուստի, կարող ենք արձանագրել, որ բացերի ստեղծումն ու հաղթահարումը պետք է դիտարկել, որպես իրավապահի մասնագիտական մտավոր գործունեության երկու անքակտելիորեն փոխկապված փուլեր: Իրավասու մարմինը, չի կարող հրաժարվել որևէ մեկի իրավունքի պաշտպանությունից, նա պարտավոր է կոնկրետ գործն ըստ էության լուծել, այսինքն՝ իրավապահը, ըստ օբյեկտիվ անհրաժեշտության, ընթացք է տալիս՝ բացը հաստատելուց մինչև այն հաղթահարելը:

Հիմնարարը՝ իրավակիրառ գործունեություն, իրավունքի բաց, իրավունքի անալոգիա, օրենքի անալոգիա, բացերի հաղթահարում, բացերի լրացում:

Իրավունքի կիրառումը տեղի է ունենում նյութական և վարույթային պոզիտիվ նորմերին խիստ համապատասխան և դրանց շրջանակներում: Այսինքն՝ իրավունքի կիրառման սուբյեկտը կոնկրետ հասարակական հարաբերության կամ փաստի նկատմամբ կիրառում է պոզիտիվ իրավունքի կոնկրետ նորմերը՝ վկայակոչելով դրանք: Նշված գործընթացի ժամանակ երբեմն պոզիտիվ իրավունքի նորմերում իրավունքի կիրառման սուբյեկտը չի գտնում տվյալ դեպքի համար նախատեսված նորմը, ինչի հետևանքով ի հայտ են գալիս որոշակի հիմնախնդիրներ, որոնք իրավագիտության մեջ անվանում են իրավունքի կամ իրավական կարգավորման բաց: Սակայն դա չի նշանակում, որ պոզիտիվ իրավունքի բացերը պետք է բացառեն իրավունքի իրացման գործընթացը: Հետևաբար իրավունքի իրացումը պետք է շարունակվի և իրավական կարգավորումը հասնի իր վերջնական նպատակին: Շարադրվածի հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ իրավունքի բաց ասելով պետք է հասկանալ իրավական կարգավորման բացակայությունը հասարակական այն ոլորտում, որոնք սովորաբար օբյեկտիվորեն պահանջում են կարգավորում: Ներկայացված բնորոշումից ակնհայտորեն պարզ է, որ իրավունքի բաց հասկացությունը վերաբերում է միայն պոզիտիվ իրավական կարգավորմանը: Օրենքից տարբերակված իրավունքը, որպես էություն, չունի բաց կամ չի կարող բաց լի-

նել: Ուստի «իրավունքի բաց» հասկացությունն ունի պոզիտիվ-իրավական իմաստ և վերաբերում է միայն պոզիտիվ իրավունքին կամ պոզիտիվ-իրավական կարգավորմանը: Հետևաբար, հիմնավոր են այն հեղինակների տեսակետները, ովքեր այս հասկացությունը ձևակերպում են որպես «օրենսդրության բաց», այլ ոչ թե իրավունքի¹:

Վերոգրյալ դիտարկումների հաշվառմամբ հարկ ենք համարում նշել, որ իրավունքի կամ օրենսդրության բացի վերաբերյալ մասնագիտական գրականության² մեջ առկա բնորոշումներն, ըստ էության, մեթոդոլոգիական տեսանկյունից նույն իմաստն ունեն: Ուստի իրավունքի բացերի վերացումը, որպես կանոն, իրավաստեղծ մարմինների գործառույթն է: Իրավունքի իրացման համատեքստում իրավագիտության մեջ օգտագործվող «իրավունքի բաց» հասկացությունն ունի զուտ իրավաբանական իմաստ: Այսինքն՝ այն համարվում է իրավաբանական հիմնախնդիր, և առկա է այն ժամանակ, երբ որոշակի հարց մտնում է իրավական կարգավորման ոլորտի մեջ, պետք է լուծվի իրավաբանական միջոցներով, սակայն նրա կոնկրետ լուծումն օրենսդրության մեջ ամբողջությամբ կամ մասնակիորեն նախատեսված չէ կամ նախատեսված է ոչ լրիվ իմաստով: Այսպիսով՝ իրավաբանական իմաստով բացերն այն դեպքերն են, երբ որոշակի հասարակական հարաբերություն ամբողջությամբ գտնվելով իրավական կարգավորման

www.aradatutyunjurnal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ուղրտում, մնացել է չկարգավորված կոնկրետ իրավական նորմով: Այդ պատճառով, իրավունքի բաց իրավաբանական իմաստով գոյություն չունի, երբ հարաբերությունների այս կամ այն ուղրտը ենթարկված չէ իրավական կարգավորման ընդհանրապես: Օրինակ, ընկերության հարաբերությունները:

Այսպիսով, իրավակիրառ գործընթացի ընթացքում կարող է պարզվել, որ քննվող գործի հանգամանքների նկատմամբ ուղղակիորեն կիրառվող կոնկրետ իրավական նորմը գործող պոզիտիվ իրավունքում բացակայում է կամ նշված իրավահարաբերությունները կարգավորված չեն: Շարադրված դեպքերը կարող են նշանակել, որ՝ օրենսդիրը հրաժարվում է այդ հարաբերությունները կամ իրադրությունները կարգավորելուց, կամ պոզիտիվ իրավունքում առկա է իրավահարաբերությունը կարգավորող պոզիտիվ իրավունքի բաց: Այն դեպքում, երբ օրենսդիրը հրաժարվում է համապատասխան փաստական հանգամանքների իրավական կարգավորումից, այդ փաստական հանգամանքները չունեն իրավաբանական նշանակություն: Այդ հանգամանքներով չպետք է հարուցվի իրավաբանական գործ, իսկ արդեն հարուցված գործերով անհրաժեշտ է կայացնել համապատասխան որոշում՝ հաշվի առնելով բացահայտված իրավաբանական նշանակության բացակայությունը: Ուրեմն իրավունքում բացն առկա է, երբ բացակայում է իրավական կարգավորման ուղրտում գտնվող փաստական հանգամանքների վերաբերյալ իրավունքի նորմը:

Վերը նշված դիտարկումների հիման վրա կարող ենք արձանագրել, որ իրավաբանական գրականության մեջ իրավունքի բացերը բաժանում են իրականի և կարծեցյալի: Իրական բացը իսկապես առկա իրավական կարգավորման բացն է: Կարծեցյալ բացն այն բացն է, երբ որոշակի հարց, հասարակական հարաբերությունների որոշակի ուղրտ չի կարգավորվում իրավունքով, չնայած այս կամ այն անձի, անձանց խմբի կարծիքով այն պետք է կարգավորվեր իրավունքի նորմով: Նշված դեպքում օրենսդիրը նպատակահարմար չի գտնում տվյալ հարցը կամ հասարակական հարաբերությունները կարգավորի իրավական միջոցներով:

Իրավունքի բացերը բաժանվում են նաև սկզբնական և հետագա բացերի: Նախնական բացն առկա է այն ժամանակ, երբ օրենսդիրը նորմատիվ ակտի ձևակերպման մեջ չի կարող ընդգրկել բոլոր կենսական դեպքերը, որոնք պահանջում են իրավական կարգավորում, երբ օրենսդիրը այս կամ այն նորմը ձևակերպել է թերություններով: Հետագա բացն առաջանում է նոր հասարակական հարաբերությունների ծագմամբ, առաջացմամբ, որոնք չէին կարող նախատեսվել օրենսդրի կողմից: Հնարավոր է, որ այդ հարաբերությունների տե-

սակն արդեն ենթարկված լինի իրավական կարգավորման: Այդպիսի բացերի առաջացման պատճառը օրենքների կյանքից հետո մնալու գործընթացներ են: Իրավունքում բացեր ասելով՝ նկատի է առնվում իրավունքի այնպիսի նորմի բացակայությունը, որը, կախված գործող իրավունքի իմաստից և դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթից, անհրաժեշտ է իրավական կարգավորման կազմավորված ուղրտում գտնվող տվյալ կոնկրետ փաստացի հանգամանքների (փաստացի հարաբերությունների) կարգավորման համար: Իրավունքում բացերը կարող են լինել կամ զարգացող հասարակական հարաբերություններից օրենսդրության հետ մնալու հետևանք, կամ էլ՝ հենց օրենսդրի սխալների ու բացթողումների, նրա օրինաստեղծ մշակույթի ցածր մակարդակի և այլնի արդյունք: Նշված դեպքում ի հայտ են գալիս այլ իրավական խնդիրներ ևս, որոնք կարող են հանգեցնել իրավունքի գերակայության սկզբունքի խաթարմանը:

Իրավունքի բացերը հայտնաբերվում են հիմնականում իրավակիրառ գործունեության ընթացքում: Իրավունքի բացի առկայությունը հաստատելու համար անհրաժեշտ է կատարել հատուկ իրավական վերլուծություն, որը պետք է հենվի հասարակական կյանքի սոցիալական փաստերի ուսումնասիրության վրա: Իրավունքի բացի առկայության կամ բացակայության հարցը ըստ Ս. Ա. Կոմարովի, հասարակ հարցերից չէ՝: Այդ դեպքում պետք է նկատի ունենալ, որ շատ իրադրություններում իրավունքի բաց չկա, ներառյալ՝

ա/ երբ իրավունքը «լռում է», ինչ-որ հարցի կապակցությամբ, ապա դա վկայում է, որ օրենսդիրն անհրաժեշտ չի համարում իրավական միջոցներով կարգավորելու տվյալ հարաբերությունները,

բ/ եթե հասարակական հարաբերության տեսակը կարգավորված է իրավունքի նորմերով, սակայն ոչ բավարար կոնկրետությամբ, միայն ընդհանուր նորմեր սահմանելով,

գ/ եթե օրենսդիրն ուղղակի կամ անուղղակի իրավակիրառող սուբյեկտին լիազորում է գոյություն ունեցող կանոնները կոնկրետացնելու կամ թույլ է տալիս որոշում ընդունելու սեփական հայեցողությամբ,

դ/ եթե նորմատիվ-իրավական ակտը հակասում կամ չի համապատասխանում սոցիալ-տնտեսական պահանջումներին և հասարակության զարգացման աստիճանին,

ե/ եթե առկա է օրենքի տրամաբանական հակասություն:

Նորմատիվ իրավական ակտերում բացերի առկայության պատճառով առաջանում է իրավունքի էության և կենսագործման խնդիրը: Այդ խնդրի լուծման գլխավոր ձևը իրավաստեղծագործությունն է, այսինքն՝ իրավասու պետական մարմնի

www.aradaradutyjournal.com

կողմից պակասող իրավական նորմի ընդունումը և գործողության մեջ դնելը: Իրավաստեղծագործության միջոցով բացը վերացվում է: Սակայն նշված պարագայում իրավունքի բացի վերացման համար պահանջվում է ավելի երկար ժամանակահատված, այդ իսկ պատճառով իրավունքի տեսության մեջ մշակվել է նաև իրավունքի բացի հաղթահարման մեկ այլ ձև՝ իրավաբանական անալոգիա: Իրավաբանական անալոգիան չի վերացնում բացը և միայն թույլ է տալիս հաղթահարել իրավունքի բացը կոնկրետ գործը լուծելու միջոցով:

Վերոգրյալի դիտարկմամբ կարող ենք արձանագրել, որ իրավունքի բացի առկայության դեպքում իրավունքի իրացման խնդիրները լուծվում են բացերի լրացման երկու ձևերով՝

- իրավունքի բացի վերացումը իրավաստեղծագործության միջոցով,
- իրավունքի բացի հաղթահարումը՝ իրավաբանական անալոգիայի միջոցով:

Իրավաստեղծագործության և անալոգիայի, որպես իրավունքի բացերի լրացման ձևերի հարաբերակցության համատեքստում հետաքրքիր հիմնախնդիր է «իրավական վակուում» և «իրավունքի բաց» հասկացությունների հարաբերակցությունը, որը պարզաբանման կարիք ունի: Մասնավորապես, պոզիտիվ իրավունքի բացերը գոյություն ունեն՝ կամ իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստերի և սոցիալական կապերի վերաբերյալ նորմերի լրիվ բացակայության տեսքով, կամ դրանց մասնակի բացակայության տեսքով: Նշված բաժանումը հիմք է տալիս որոշ իրավաբան գիտնականների՝ եզրակացնելու, որ իրավական նորմերի լրիվ բացակայության կացությունը, այսպես կոչված, իրավական վակուումն է: «Իրավական վակուումը» իրավական նորմերի բացակայությունն է, որոնք պետք է կարգավորեին նախկինում իրավունքով չկարգավորված, բայց իրավական կարգավորման կարիք ունեցող նոր ծագած հասարակական հարաբերությունները: Ըստ այս հեղինակների, իրավական վակուումը և իրավունքի բացը միավորող ընդհանուր հատկանիշը համարվում է այն, որ դրանք ծագում են հասարակական հարաբերությունների զարգացման կապակցությամբ, օրենսդրության՝ կյանքից ետ մնալու հետևանքով: Սակայն, եթե բացը լրացնելու համար կարելի է դիմել անալոգիայի, ապա իրավական վակուումը լրացնելու համար նման եղանակն անընդունելի է: Այս դեպքում անհրաժեշտ է համապատասխան նորմատիվ ակտի ընդունում: Հետևաբար, շարադրված դեպքերում «իրավական վակուում» և «իրավունքի բաց» հասկացություններն որոշակի հատկություններով ու հատկանիշներով կարծես թե համընկնում են, սակայն իրավական վակուում, իրավունքի բաց հասկացությունների տարբերակումն իրականում ունի հիմքեր: Սակայն, կարծում ենք,

որ այս հիմնախնդիրը համարվում է ավելի լայն հիմնախնդրի մի մասը կամ դրա հետ սերտորեն կապված է: Խոսքը գնում է անալոգիայի կիրառման թույլատրվող և չթույլատրվող ոլորտների մասին: Այն ոլորտներում, որտեղ առկա է իրավունքի բացը և չի թույլատրվում անալոգիան, ուրեմն՝ բացը իսկապես վակուում է: Բայց վակուում կարող է առաջանալ նաև, օրինակ, քաղաքացիական ոլորտում, բայց այստեղ այն բոլոր դեպքերում անալոգիայի միջոցով կարող է հաղթահարվել: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Գ. Դանիելյանը նշել է, որ՝ «...ինչո՞ւ իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառմանը դեռևս պատշաճ ուշադրություն չի դարձվում, ինչո՞ւ այն չի դիտվում որպես իրավական որոշակիության հետ աղերսներ ունեցող իրավական բացերը հաղթահարելու միջոց: Այս հարցի պատասխանը, թերևս, առնչվում է իրավական մշակույթի հետ: Վերջին հաշվով ակնհայտ է, որ հայրենական իրավական համակարգում այդպես էլ չի ձևավորվել իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառման կայուն պրակտիկա, ինչը խոչընդոտում է անհրաժեշտ արհեստավարժության պակասը: Նկատենք, որ համապատասխան ուսումնական հաստատություններում իրավագիտություն մասնագիտությամբ պրակտիկ աշխատողների վերապատրաստման ծրագրերում անգամ նախատեսված չեն իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառման դասընթացներ»⁵: Շարադրվածի հիման վրա կարող ենք նշել, որ իրավակիրառ գործունեության մեջ իրավունքի բացերի վերացման կարևոր եղանակներից է իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառումը, քանի որ նշված եղանակների կիրառման պարագայում իրավունքի բացերի վերացման գործընթացն ավելի արագ է տեղի ունենում, քան իրավաստեղծ գործունեության դեպքում: Հարկ ենք համարում նշել, որ իրավունքի բացերի վերացումն իրավաստեղծ գործունեության միջոցով պետք է իրականացվի միայն այն դեպքում, երբ կոնկրետ հասարակական հարաբերությունները պահանջում են իրավական կարգավորում:

Իրավունքի բացերի լրացման լավագույն ձևը իրավաստեղծագործության միջոցով այն վերացնելն է, սակայն, իրավունքի կիրառման ներկայացվող պահանջներից մեկն էլ օպերատիվությունն է, ուստի իրավաստեղծագործության ճանապարհով իրավունքի բացի վերացումը դանդաղ ընթացող գործընթաց է, որը իրավակիրառման գործընթացի արդյունավետության վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն: Հետևաբար, քանի դեռ իրավունքի բացերը չեն լրացվել իրավաստեղծ գործունեության միջոցով, իրավակիրառ գործընթացում անհրաժեշտություն է առաջանում իրավունքի բացերը վերացնել անալոգիայի միջոցով: Իրավաբանական անալոգիան իրավունքի բացերի ժամանակավոր, եզակի հաղթահարման եղանակն է և առկա

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

է անալոգիայի երկու տեսակ՝ օրենքի անալոգիա և իրավունքի անալոգիա:

Գործի լուծումը բովանդակությամբ ամենից մոտիկ նորմերի հիման վրա, այսինքն՝ իրավունքի կիրառումը դեպքերի նկատմամբ, որոնք ուղղակիորեն նորմով չեն կարգավորված, սակայն նման են այդ նպատակով նախատեսված դեպքին, կոչվում է օրենքի անալոգիա: Իսկ եթե բացի առկայության դեպքում նման նորմ չի հայտնաբերվում, ապա կիրառվում է իրավունքի անալոգիան, այսինքն քննարկվող դեպքի նկատմամբ ամբողջ իրավունքի կամ իրավունքի ճյուղի, կամ իրավական ինստիտուտի ընդհանուր դրույթների ու սկզբունքների կիրառումը: Իրավունքի անալոգիան կիրառվում է այնտեղ, որտեղ անհնարին է ընտրել նմանատիպ նորմ: Կարևոր է, որպեսզի, ինչպես օրենքի, այնպես էլ իրավունքի անալոգիայի կիրառման անհրաժեշտությունը ու հնարավորությունը հատուկ նախատեսվի օրենքով և անալոգիայի կիրառումը պետք է հիմնվի օրենքների վրա, կոնկրետ նորմերի և ընդհանուր իրավական սկզբունքների վրա, այլ ոչ թե սուբյեկտիվ գնահատականների, կարծիքների, պաշտոնատար անձանց հայեցողության վրա, որը կարող է հանգեցնել իրավունքի որոշակիության և գերակայության սկզբունքների խախտման: Իրավունքի անալոգիան նշանակում է օրենսդրությամբ չկարգավորված հարաբերության նկատմամբ իրավունքի ընդհանուր դրույթների և իմաստի կիրառում: Այդ ընդհանուր սկզբունքների և իրավունքի իմաստի տակ հասկացվում են իրավունքի և իրավական կարգավորման ճյուղային սկզբունքները: Համաձայն ազատական-իրավաբանական իրավահասկացողության՝ իրավունքի հիմնարար և համընդհանուր սկզբունքը ձևական հավասարության սկզբունքն է, որի կոնկրետացումներն են համարվում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մնացած բոլոր նորմատիվ իրավական ձևերը: Արդի ժողովրդավարական պետություններում իրավունքի կիրառումն անալոգիայի միջոցով ունի սկզբունքային, կարևոր սահմանափակում, իրավաբանական անալոգիան չի կարելի կիրառել քրեական իրավունքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ նշանակվող տույժերի ոլորտներում: Նշվածը պայմանավորված է քննարկվող հասարակական հարաբերությունների առանձնահատկություններով և նշված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման եղանակներով:

Օրենքի անալոգիան չկարգավորված հարաբերությունների նկատմամբ նմանօրինակ հարաբերությունները կարգավորող օրենքի (գործող պոզիտիվ իրավունքի) նորմի կիրառումն է: Քաղաքացիական և ձեռնարկատիրական հարաբերությունների, մարդու անօտարելի իրավունքների ու ազա-

տությունների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանության ոլորտում օրենքի անալոգիայի կիրառումը նախատեսված է արտասահմանյան մի շարք պետությունների օրենսդրական ակտերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ: Իրավակիրառ գործունեության մեջ օրենքի անալոգիան օգտագործելիս համապատասխան հարաբերությունների իրավաբանական որակման և ամբողջությամբ գործի լուծման համար նմանօրինակ հարաբերություններ կարգավորող պիտանի նորմը, առաջին հերթին, պետք է որոնել օրենսդրության այն ճյուղում, որի կարգավորման ոլորտին է վերաբերում դիտարկվող հարաբերությունը (գործի հանգամանքները), իսկ տվյալ ճյուղում նման նորմի բացակայության դեպքում դա անհրաժեշտ է որոնել տվյալ իրադրությունը կարգավորող օրենսդրությանը ավելի մոտիկ ճյուղերում և ամբողջությամբ օրենսդրության (գործող ամբողջ պոզիտիվ իրավունքի) մեջ: Նմանօրինակ հարաբերությունները կարգավորող օրենսդրության նորմի բացակայության, այսինքն՝ օրենքի անալոգիայի օգտագործման անհնարինության դեպքում, կիրառվում է իրավունքի անալոգիան:

Իրավունքի բացերի վերացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի դրանց հայտնաբերումը և հաստատումը: Վ.Վ. Լազարևի կարծիքով՝ եթե համեմատենք երկու իրավական երևույթների նշանակությունը՝ բացերի հայտնաբերումը և իրավապահ գործընթացի ընթացքում դրանց լրացումը կամ հաղթահարումը, ապա առաջնահերթությունը պետք է տրվի բացերի հայտնաբերման խնդրին, քանի որ դրա լուծումն առավել կարևոր է օրենքի գերակայության պահպանման և իրավակարգավորման համակարգի կատարելագործման գործում ճիշտ ուղղության ապահովման համար:

Իրավական գրականության մեջ նկարագրվում է իրավունքում բացերը հաստատելու երկու հիմնական մեթոդ՝ ֆորմալ-իրավական և կոնկրետ-սոցիոլոգիական: Դրանցից առաջինը՝ ֆորմալ-իրավական, ենթադրում է գործող իրավունքի համակարգի բովանդակության մշակման և վերլուծության մեթոդների հատուկ շարք և ուղղված է հատկապես նորմատիվ ակտերում «տեխնիկական» թերությունների հաստատմանը: Բացերի հաստատման այս մեթոդի առանձնահատկությունը իրավունքի որոշ էական կողմերից վերացումն է, որոնք կապված են իրավական համակարգի նյութական և սոցիալական պայմանականության հետ: Այս մեթոդի կիրառման շրջանակներում առաջին պլան են մղվում տրամաբանական, լեզվական և այլ վերացական կողմերը՝ արտահայտելով իրավունքի կառուցվածքային օրինաչափությունները: Օրենքում բացերի հաստատելու հիմնական մեթոդները, ինչպես նշում է Է.Շ.Քենուլարիան, անալոգիայի վերաբերյալ եզրակացություններ են¹⁰: Այս առումով, հե-

www.aradatuynjournal.com

դինակը անալոգիան համարում է ոչ միայն որպես բացը լրացնելու եղանակներից մեկը, այլև որպես բացի հատկանիշ: Նրա կարծիքով. «Հենց այն փաստը, որ փաստացի օրենքով չկարգավորվող հարաբերությունների նմանությունը հաստատում է դրանով կարգավորվող հարաբերությունների հետ, ենթադրություն է առաջացնում, որ գոյություն ունի բաց» : Միևնույն ժամանակ, կարգավորվող նշանը փոխանցվում է այն հարաբերություններին, որոնք չունեն այն, քանի որ մյուս նշանները համարվում են համընկնող, նույնական²: Այնուամենայնիվ, բացը հաստատելու ֆորմալ և իրավական մեթոդները, «չեն աշխատում» այն դեպքերում, երբ հարց է առաջանում բոլորովին նոր նորմատիվ ակտ ստեղծելու մասին: Վերջին դեպքում՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարական և այլն բացահայտելու համար նոր ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորող հիմքերը կօգտագործվեն կոնկրետ սոցիոլոգիական մեթոդի հայեցակարգով ընդգրկված տեխնիկայի և մեթոդների միջոցով:

Այսպիսով, իրավական գիտությանը հայտնի բացերի հաստատման մեթոդները (ֆորմալ-իրավական և կոնկրետ-սոցիոլոգիական) նպատակ ունեն վերացնել բացերը և հասնել իրավական համակարգի այնպիսի վիճակի, որի դեպքում առավելագույն չափով բացառվելու է, մի կողմից՝ իրավական թելադրանքի, իսկ մյուս կողմից՝ դատական կամայականության հնարավորությունը, ինչն իր հերթին նպաստում է իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների պահպանությանը: Այս առումով, թվում է, որ առավել «բացերը» պետք է ճանաչվեն իրավունքի այն ճյուղերը, որտեղ թույլատրվում են պայմանագրային հարաբերություններ, որոնք ենթադրում են, որ կարգավորման հարցերի բավականին մեծ շրջանակ տրվում է հենց պայմանագրային իրավահարաբերությունների մասնակիցներին համաձայնեցնելու համար: Ակնհայտ է, որ այս տեսանկյունից առաջնահերթությունը պետք է տրվի քաղաքացիական իրավունքին՝ որպես իրավական համակարգի ամենաբարդ և մասշտաբային ճյուղերից մեկը: Դրա շատ ինստիտուտներ, ինչպիսիք են կորպորատիվ իրավունքը, հեղինակային իրավունքը, պայմանագրային իրավունքը և այլն, այնքան ծավալուն են, որ երբեմն գերազանցում են իրավունքի որոշ անկախ ճյուղերը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ իրավական կարգավորման բացերի հայտնաբերման հիմնական ոլորտն իրավական պրակտիկան է, և, մասնավորապես, իրավապահ մարմինների գործունեությունը, որի ընթացքում բավականին հաճախ անհրաժեշտ է դառնում լուծել վիճահարույց իրավիճակը՝ իրավական նորմերում կոնկրետ նմուշի բացակայության պայմաններում:

Ինչպես արդեն նշվել է՝ իրավունքի և օրենքի բացերը հաղթահարելու հիմնական միջոցը անալոգիայի օգտագործումն է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով իրավունքի բացերը «լրացնելու», «հաղթահարելու» հասկացությունների մասին վերը նշված քննարկումը, այսօր իրավունքի բացերի տեսության և դրանց լրացման պրակտիկայի ամենախնդրահարույց հարցերից մեկը իրավակիրառ գործընթացում բացերը լրացնելու թույլատրելի սահմանները որոշելն է՝ ներառյալ օրենքի անալոգիայի և իրավունքի անալոգիայի կիրառումը: Անալոգիայի թույլատրելիության սահմանները կախված են իրավունքի որոշակի ճյուղի առանձնահատկություններից, դրա սկզբունքներից և հատուկ օրենսդրական դրույթներից: Օրինակ՝ քրեական դատավարությունում նման սահմանները որոշվում են օրենքի անալոգիայի տրամաբանական և իրավական բնույթից բխող խիստ չափանիշներով: Ընդ որում, այստեղ առավելությունը պատկանում է ոչ թե եզրակացության տրամաբանական պայմաններին, այլ քրեական դատավարության օրենսդրությանը և քննչական մարմինների, դատախազության և դատարանի իրավապահ մարմինների գործունեությանը բնորոշ հատուկ պահանջներին: Հետևաբար, ինչպես Հայաստանի Հանրապետության իրավունքի տարբեր ճյուղերում անալոգիայի օգտագործման բուն փաստի հետ կապված, բացերը լրացնելու սահմանները, ավելի ճիշտ՝ այն հանգամանքների շրջանակը, որոնցում հնարավոր է անալոգիա օգտագործել, տարբերվում են՝ կախված քննարկվող վիճահարույց հարաբերությունների բնույթից: Այս առումով ուշադրության են արժանի շատ հեղինակների կողմից մշակված օրենքի և իրավունքի կիրառման պայմանները անալոգիայի միջոցով: Հատկանշական է, որ իրավաբանների կողմից մշակված անալոգիայի կիրառման պայմանների տարբերակները առավել լայնորեն ներկայացված են քրեական դատավարության իրավունքի ճյուղի առնչությամբ: Այնուամենայնիվ, իրավաբանների շրջանում, այս պայմանների համակարգման և դասակարգման հարցում համաձայնություն չկա: Ա.Կ.Կազը ուշադրություն է հրավիրում իրավահարաբերությունների այն մասի բովանդակությունը որոշելու անհրաժեշտության վրա, որը չի կարգավորվում իրավունքի նորմերով կամ կողմերի համաձայնությամբ:

Մ.Ս.Ստրոգովիչը, անալոգիայով, քրեական դատավարության օրենքի կիրառման հիմնական պայմանների շարքում նշում է՝ քրեական դատավարության օրենքում նախատեսված դեպքի միատարրությունն այն դեպքի հետ, որի նկատմամբ տվյալ օրենքը կիրառվում է անալոգիայով, անալոգիայի անթույլատրելիությունն այն դեպքում, երբ դա կարող է հանգեցնել դատավարության մասնակիցների դատավարական իրավունքների սահմա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նափակմանը, օրենքի անալոգիայի օգտագործումը միայն այն դեպքում, երբ դատավարական գործողությունը նախատեսված է օրենքով: Վ.Ն.Կարտաշովը, որպես անալոգիայի իմաստաբանության կիրառման ինքնուրույն պայման, կոչ է անում իրավական կարգավորման շրջանակը որոշելու անհրաժեշտությունը, ասինքն, որոշել այն հարցը, թե արդյո՞ք օրենքով չկարգավորված հարաբերությունները պետք է ներառվեն այս ոլորտում: Սակայն, այս վերջին պայմանը, դժվար թե հատուկ պարզաբանման կարիք ունենա, քանի որ ըստ էության, այն իրականացվում է դատարանի կողմից բացը լրացնելու իր իրավունքի օգտագործման յուրաքանչյուր դեպքում: Քրեական դատավարությունում անալոգիայի օգտագործման պայմանների բոլոր դիտարկված տարբերակները ցույց են տալիս, որ ամեն դեպքում, իրավապահ մարմինների գործողությունները, երբ հայտաբերվում է օրենքի բացը, ներառում է երեք փուլ՝ բացը հայտարարելը, իրավունքում նման իրավահարաբերությունները կարգավորող նորմի որոնումը, կողմերի իրավունքների և պարտականությունների որոշումը՝ ելնելով այդ համանման նորմից կամ (դրա բացակայության դեպքում)՝ օրենսդրության սկզբունքներից և իմաստից: Անալոգիայի օգտագործման հետագա քայլը հատուկ տրամաբանական և իրավական տեխնիկայի կիրառումն է, որը թույլ է տալիս իրականացնել վերը նշված գործողությունները: Է.Վ.Վասկովսկին, վերլուծելով նման տեխնիկան, նշել է, որ անալոգիայի միջոցով եզրակացության ճշգրտության համար անհրաժեշտ երկու պայմանների առկայությունը՝ դուք պետք է իմանաք, թե որ սեռին է պատկանում այն տեսակը, որի համար տրվում է նորմը, պետք է հաստատվի, որ այս նորմը որոշվում է այնպիսի նշաններով, որոնք բնորոշ են համեմատվող տեսակներին՝:

Վերոգրյալ դիտարկումների հաշվառմամբ կարող ենք նշել, որ ՀՀ-ում իրավունքի ներպետական տեսության մեջ երկար տարիներ գերակշռում էր այն տեսակետը, ըստ որի՝ դատարանները կարող էին իրականացնել միայն օրենքի պաշտոնական մեկնաբանություն՝ առանց նոր նորմեր ստեղծելու, քանի որ գործող օրենսդրությամբ օժտված չեն գործող օրենսդրությամբ նորմեր ստեղծող գործառույթով և իրենց բնույթով իրավապահ մարմիններն են, մինչդեռ իրավաստեղծ գործունեությունը մնում է օրենսդիր մարմինների իրավասությանը: Այնուամենայնիվ, վերջին տարիներին իրավական գրականության մեջ ավելի ու ավելի է խոսվում այն մասին, որ դատական նախադեպը, որպես իրավունքի աղբյուր, իրավունք ունի գոյություն ունենալ ՀՀ իրավական համակարգում: Ավելին, այս հարցը ծագում է հիմնական քաղաքացիական, վարչական և այլ գործերի որոշակի կատեգորիաների գործերի քննության առնչությամբ՝ իրավունքի բացերի առ-

կայության դեպքում: Շարադրված դիտարկումների հիման վրա կարող ենք նշել, որ նախ՝ դատական մարմինների կողմից օրինաստեղծ գործառույթների ճանաչումը, կարծես կհանգեցնի դատական գործունեության մեջ անալոգիայի իմաստաբան օգտագործման որոշակի կարգի և կրճատման, քանի որ բարձրագույն դատական մարմինների որոշումներին պարտադիր ուժ տալը կբացառի նմանատիպ գործերով տարբեր որոշումներ կայացնելու հանրավորությունը, երկրորդ՝ դատարաններին օրինաստեղծ լիազորություններով օժտելը կընդլայնի դատարանների ազդեցության շրջանակը հասարակական հարաբերությունների վրա, կարելի է ենթադրել, որ այս դեպքում կարող են լրացվել իրավական կարգավորման ցանկացած բացեր, այդ թվում նրանք, որոնք մենք նշել ենք որպես որակյալ բացեր: Դժվար չէ ենթադրել, որ իրավաբանների տարբեր վերաբերմունքը դատական իրավունքի ստեղծման խնդրի նկատմամբ մեծապես պայմանավորված է մեր ժամանակի երկու հիմնական իրավական համակարգերից՝ մայրցամաքային և ընդհանուր իրավունքին բնորոշ իրավական ընթացման տարբերությամբ: Այնուամենայնիվ, ներկայումս, ինչպես նշում են իրավաբանները, արդարադատության մերժումը կանխելու համար, օրենսդրական կարգավորման բացերը լրացնելու համար դատական օրենսդրությունը լայնորեն ճանաչված է մայրցամաքային իրավունքում, ինչը ցույց է տալիս իրավական համակարգերի էվոլյուցիայի ընդհանուր միտումները դեպի դրանց մերձեցումը: Հավանաբար, դատարանների կողմից օրինաստեղծ գործառույթների ճանաչման դեպքում օրենսդրության բացերը լրացնելու սահմանների հարցն այլևս այդքան սուր չի լինի: Մինչդեռ, ներկայիս պայմաններում, թվում է, որ սահմաններ սահմանելու համար, որոնց շրջանակներում իրավապահ մարմինները կարող են լուծել բացերը լրացնելու հարցը, իրավական դոկտրինում պետք է մշակվեն որոշակի ուղեցույցներ: Թվում է, որ նման ուղեցույցներից մեկը կարող է լինել իրավակարգավորման հիմքերի անփոփոխությունը: Այսինքն՝ բացերը լրացնելու գործընթացում ստեղծված իրավական նախադեպերը չպետք է իրավական համակարգի նորմատիվ բովանդակություն մտցնեն նոր տարբեր, որոնք կարող են փոխել կարգավորման նորմատիվ հիմքերը:

Վերոգրյալը նշանակում է, որ բացը հաղթահարելու գործընթացում իրավակիրառ մարմինների կողմից ընդունված որոշումը պետք է ամբողջությամբ հանգի կոնկրետ իրավիճակի լուծմանը: Հենց բացը լրացնելու սահմանների այս ըմբռնումն է առավելագույնս համապատասխանում իրավական դոկտրինում իրավապահ մարմինների ամենատարածված մեկնաբանությանը, որը, ըստ Ս.Ս.Ալեքսևի սահմանման, ուժային անհատական

իրավական գործունեություն է, որն ուղղված է իրավական գործերի լուծմանը: Այս գործունեության արդյունքում իրավական համակարգի կառուցվածքում ընդգրկվում են տարրեր՝ անհատական կանոնակարգեր: Բայց այդ կանոնակարգերը, ինչպես նշվեց վերևում, կարող են ունենալ բացառապես անհատական ուղղվածություն և չպետք է փոխեն իրավական կարգավորման հիմքերը որպես ամբողջություն:

Ամփոփելով վերոշարադրյալ դիտարկումներն ու կատարված վերլուծությունները՝ կարող ենք նշել, որ իրավունքի բացերի վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա է էական տերմինաբանական շփոթություն՝ «վերացնել», «լրացնել», «հաղթահարել» հասկացությունների օգտագործման մեջ: Նշենք, որ այս վեճը գոտ տերմինաբանական է, քանի որ այն իրականացվում է հիմնականում տերմինների օգտագործման, այլ ոչ թե երևույթների էության վերաբերյալ: Այն որոշակի նշանակություն է ստանում միայն այն դեպքում, եթե լուծում է այն հարցը, թե ո՞րն է դատարանների կողմից բացերի լրացումը՝ իրավաստեղծ կամ իրավակիրառման տարր: Հետևաբար, կարծում ենք, որ «բացերը լրացնել» ասելով՝ նկատի է առնվում իրավասու պետական մարմնի (դատարանի) կողմից փիճահարույց իրավահարաբերությունների վերաբերյալ հատուկ որոշման ընդունումը՝ օրենսդրության կամ իրավունքի բացը բացահայտելու պայմաններում: «Բացերի վերացում» հասկացությունը, որը ենթադրում է դրանց ամբողջական վերացում իրավունքի և օրենքի համակարգում, իրականացնում են իրավասու իրավաստեղծ մարմինները՝ օրենսդիր, գործադիր և այլն: Բացերի վերացումը կատարվում է լրացումների միջոցով, բացի լրացումը իրավաստեղծ մարմինների լիազորությունն է և իրենից ներկայացնում է չբավականացնող իրավունքի նորմի մշակում: Ինչ վերաբերում է «բացերի հաղթահարում» տերմինին, սալա մեր կարծիքով, այն ունի իր կիրառման ոլորտը՝ սա իրավասու պետական մարմինների գործունեությունն է, որոնք ստիպված են լինում հաճախ իրենց գործունեության ընթացքում լուծել այն հարցը, թե ինչպես պետք է վարվել իրավական կարգավորման բացերի հայտնաբերման դեպքում: Ներկայացվածի վերլուծության և հետազոտության արդյունքում կարող ենք հստակ արձանագրել, որ իրավունքի բացի լրացման լավագույն ձևը իրավաստեղծագործության միջոցով այն վերացնելն է: Մակայն իրավաստեղծագործության ճանապարհով բացի վերացումը շատ դանդաղաշարժ գործընթաց է, հետևաբար, քանի դեռ իրավունքի բացը չի վերացվել իրավաստեղծ մարմնի կողմից, իրավակիրառ գործունեության ընթացքում ժամանակավոր ծագում է դրա հաղթահարման անհրաժեշտությունը: Հենց այստեղ էլ առաջ է քաշվել իրավունքի բացի

հաղթահարման մեկ այլ եղանակ՝ անալոգիան: Անալոգիա (հունարեն՝ analogia) նշանակում է գործընթացի հատկանիշների վերագրումը նման մեկ այլ գործընթացի: Իրավունքի անալոգիան իրավունքի բացերի ժամանակավոր, եզակի հաղթահարման եղանակն է: Գոյություն ունի անալոգիայի երկու տեսակ՝ օրենքի անալոգիա և իրավունքի անալոգիա: Օրենքի անալոգիան կիրառվում է այն դեպքում, երբ չկա իրավունքի նորմ, որը կարագավորում է կոնկրետ կյանքի գործը, սակայն օրենսդրության մեջ կա մեկ այլ կանոն, որը կարագավորում է դրան նման հարաբերությունները: Իսկ իրավունքի անալոգիան կիրառվում է, երբ օրենսդրությունը չի պարունակում նմանատիպ գործը կարգավորող իրավունքի գերակայություն, և գործը լուծվում է իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա: Ընդհանրացնելով ներկայացված ուսումնասիրությունները կարող ենք փաստել, որ իրավունքը դիմամիջ զարգացող երևույթ է, և ըստ էության հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ օրենսդիրն ընդունում է նոր իրավական ակտեր, որոնք ուղղված են փոփոխված հասարակական հարաբերությունների կարագավորմանը: Մակայն լինում են իրավիճակներ, երբ արդեն իսկ ձևավորված և առկա հասարակական հարաբերությունների պայմաններում բացակայում են այդ հարաբերությունները կարագավորող իրավական նորմերը, հետևաբար, նշված դեպքերի հաղթահարման համար օգնության է հասնում անալոգիան: Բացի այդ, հատկանշական է այն, որ իրավագիտության մեջ բացերը հաղթահարելու (վերացնելու) վերը թվարկված եղանակներից կա ևս մեկը. այն է՝ իրավունքի սուբսիդար կիրառումը: Իրավունքի սուբսիդար կիրառումը միասնականացնում է իրավական կարգավորումը, որովհետև կանխում է կարգավորման առարկայով և ձևավորման մեթոդով նման հարաբերությունները կարգավորող նորմերի կրկնությունը, այն բացառապես չի սահմանափակվում իրավական բացերի հաղթահարումով, քանի որ կարող է տեղի ունենալ նաև այն դեպքերում, երբ օրենսդրության մեջ նաև բացեր չկան:

www.aradaradatiyujournal.com

- ¹ Տե՛ս, Протасов В. Н., Теория государства и права. Проблемы общей теории права и государства. М., 2001, С. 33.
- ² Տե՛ս, Общая теория государства и права. Акад. урс. Изд. 2-е. Отв. ред. М. Н. Марченко. Т. 3, М.: Изд. Зерцало, 2001, С. 407.
- ³ Տե՛ս, Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 29:
- ⁴ Տե՛ս, Марченко М. Н., Источники права, М., 2005, С. 24:
- ⁵ Տե՛ս, Գանիելյան Գ., Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, Պետության և իրավունքի տեսություն, http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf /մուտք՝ 30.01.2023թ./:
- ⁶ Տե՛ս, Лихачев В. Н., Установление пробелов в современном международном праве, К., 1989, С. 7:
- ⁷ Տե՛ս, Акимов В. И., Понятие пробела в праве. Правоведение, 1969, N 3, С. 110:
- ⁸ Տե՛ս, Лазарев В. В., Пробелы в праве и пути их устранения, М., Юрид. лит. 1974, С. 40:
- ⁹ Տե՛ս, Лазарев В. В., О видах пробелов в праве, Правоведение, 1969. N 6, С. 35:
- ¹⁰ Տե՛ս, Бачиашвили И. М., Зоидзе В.И., Капанадзе Т. Ш. и др., Актуальные проблемы советского права. Тбилиси, Мецниереба, 1988, С. 239:
- ¹¹ Տե՛ս, նույն տեղում:
- ¹² Տե՛ս, նույն տեղում:
- ¹³ Տե՛ս, Белкин А. А., Аналогия в государственном праве // Правоведение. 1992. N 6, С. 90:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում:
2. Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենք, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381):
3. Գանիելյան Գ., Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, Պետության և իրավունքի տեսություն, http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf /մուտք՝ 30.01.2023թ./:
4. Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001:
5. Акимов В. И., Понятие пробела в праве. Правоведение, 1969, N 3.
6. Бачиашвили И. М., Зоидзе В. И., Капанадзе Т. Ш. и др., Актуальные проблемы советского права. Тбилиси, Мецниереба, 1988.
7. Белкин А. А., Аналогия в государственном праве // Правоведение. 1992. N 6.
8. Протасов В. Н., Теория государства и права. Проблемы общей теории права и государства. М., 2001.
9. Марченко М. Н., Общая теория государства и права. Акад. Курс. Изд. 2-е. Отв. ред. Т. 3, М.: Изд. Зерцало, 2001.
10. Марченко М. Н., Источники права, М., 2005.
11. Лихачев В. Н., Установление пробелов в современном международном праве, К., 1989.
12. Лазарев В. В., Пробелы в праве и пути их устранения, М., Юрид. лит. 1974.
13. Лазарев В. В., О видах пробелов в праве, Правоведение, 1969. N 6.

Армен Асатрян

Первый заместитель председателя Палаты адвокатов РА,
преподаватель кафедры теории государства и права и истории ЕГУ,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

*Правовые способы восполнения пробелов в правоприменительной деятельности
и методы выявления пробелов*

В рамках статьи рассмотрены и проанализированы вопросы правовых способов восполнения пробелов в праве при осуществлении правоприменительной деятельности. В результате изучения и анализа указанной проблемы можно констатировать, что противоречия, недостатки или неполнота правовых норм могут быть выявлены только в ходе правоприменительной деятельности, а для их завершения большое значение имеет правотворческая деятельность, а также разрешение того или иного правового спора в суде или, при необходимости, урегулирование конкретного правового вопроса другими компетентными органами. Поэтому суд будет последней инстанцией, имеющей полномочия подтвердить наличие пробелов. При возникновении такой ситуации суду необходимо разрешить дело по существу, то есть восполнить пробел. Таким образом, можно констатировать, что создание и преодоление пробелов следует рассматривать как два неразрывно связанных этапа профессиональной интеллектуальной деятельности сотрудника правоохранительных органов. Компетентный орган не может отказать в защите чьих-либо прав, он обязан решать конкретное дело по существу, то есть правоприменитель в соответствии с объективной необходимостью переходит от подтверждения пробела к его преодолению.

Ключевые слова: правоприменительная деятельность, пробел в праве, аналогия права, аналогия закона, преодоление пробелов, восполнение пробелов.

Armen Asatryan

First Deputy Chairman of The Chamber of Advocates of RA,
Lecturer of the YSU Chair of History and Theory of State and Law,
Candidate of Law, Associate Professor

SUMMARY

Legal ways to fill gaps in law - enforcement activities and methods for identifying gaps

In the article, the issues of legal ways of filling the gaps in the law during law-enforcement activities where discussed and analyzed. As a result of the study and analysis of the mentioned problem, we can state that the contradictions, defects or incompleteness of legal norms can be detected only in the course of law-enforcement activities, and for their completion, the law-making activity is of great importance, as well as the specific resolution of this or that legal dispute in the court or, if necessary, settling it. the legal issue by other competent authorities. Therefore, the court will be the last instance that has the authority to confirm the existence of gaps. In the event of such a situation, the court needs to resolve the case on its merits, that is, to fill the gap. Therefore, we can record that the creation and overcoming of gaps should be considered as two inextricably linked stages of the professional intellectual activity of a law enforcement officer. The competent body cannot refuse to protect someone's rights, it is obliged to solve the specific case essentially, that is, the law enforcement officer, according to the objective necessity, proceeds from confirming the gap to overcoming it.

Key words: law - enforcement activity, law gap, law analogy, overcoming gaps, filling gaps.

Բնագիրը ներկայացվել է 14.02.2023թ.

Ընդունվել է տպագրության 17.04.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ծատուրյանը